

ՄՈՄԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՄԻՈ ՊԱՏՐԻԱՐԷ
Ն.Ս. ԱԼԵԽՍԻ Բ-Ի ԽՈՍՔԸ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ
ԱՂԲԵՋԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԵՌԱԿՈՂՄ
ՀԱՆԴԻՊՄԱՆ ԲԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(24 նոյեմբերի 2000 թ.)

Ձերդ Սրբություն, Ծայրագույն Պապրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոս, Ն.Ս. Գարեգին Բ, Կովկասի ժողովուրդների Վերին Կրոնական Խորհրդի արժանապատիվ նախագահ, Աղբրեջանի մահմեդականների հոգևոր առաջնորդ Շեյխ-ուլ-խալամ Ալլահշուբյուր Փաշա-գադեն, Ձերդ Սրբազնություններ, պարոն դեսպան, սիրելի եղբայրներ.

Բարձրյալն Աստուծո ողորմածությամբ երեք ժողովուրդների հոգևոր առաջնորդներս հավաքվել ենք այսօր՝ Սուրբ Դանիելյան վանքում, որպեսզի ընդհանուր ջանքերով խաղաղության ու համաձայնության ուղիներ փնտրենք: Նման հանդիպումներն արդեն, առանց չափազանցության, կարելի է ավանդական համարել:

Ռուս Ուղղափառ և Հայաստանյայց Առաքելական Եկեղեցիների ներկայացուցիչներն ու Աղբրեջանի մահմեդականների հոգևոր առաջնորդը Խորհրդային Միության հոգևոր առաջնորդների երկխոսության շրջանում հանդիպել են միմյանց: Երբ բռնկվեց հայ-աղբրեջանական արյունահեղ հակամարտության բոցը, մեր Եկեղեցին, հավասարապես երկու ժողովուրդների հոգևոր առաջնորդների հետ, զգաց հոգևոր գործիչների երկխոսության անհրաժեշտության սուր կարիքը, որպեսզի իր նպաստը բերի արյունահեղությունը դադարեցնելու և խաղաղություն հաստատելու գործին: 1993 և 1994 թթ. նույն այս դաժիճում մեր միջնորդությամբ իրար մոտ եկան հարգարժան Շեյխ-ուլ-խալամ, Ալլահշուբյուր Փաշա-գադեն և Հայ Առաքելական Եկեղեցու ղեկավարները՝ երջանկահիշարակ Վազգեն Կաթողիկոսը և Ծայրագույն Պապրիարքի ներկայացուցիչները: Այդ ժամանակ ընդունվեցին ոգևորող փաստաթղթեր, Աղբրեջանի, Հայաստանի և Ռուսաստանի պետական այրերին մեր երկրների ժողովուրդներին հասցեագրված դիմումներ: Հոգևոր առաջնորդները կոչ արեցին դադարեցնել արյունահեղությունը, լայնածավալ երկխոսություն հաստատել, որպեսզի խաղաղ միջոցներով լուծվեն առկա բոլոր փարաձայնությունները: Հատուկ ուշադրություն դարձրեցինք այն բանին, որ վճռականորեն մերժվի աղբրեջանա-հայկական հակամարտության մեկնաբանումը իբրև միջկրոնական հակամարտություն: Մենք միաժամանակ հաստատականություն հանդես բերեցինք, որպեսզի քրիստոնեության և մահմեդականության հետևորդները փոխադարձ կերպով նպաստեն խաղաղարար ջանքերին, այն նպատակով, որ համարելով ուժերով գրավեն խաղա-

դության հանգեցնող ուղիներ: Կայունացման սկզբնական շրջանում, 1995 թ., հենց այսպեղ մեր հրավերով հանդիպեցին Գարեգին Ա Սրբազնագույն Կաթողիկոսը և արժանապատիվ Շեյխ-ուլ-իսլամ, Ալլահշուքյուր Փաշա-գադեն: Այդ հանդիպման ժամանակ ընդունված Մոսկովյան հռչակագրի նպատակն էր ձեռք բերված խաղաղության ամրապնդում և այրուհիներ հակամարտության ժամանակ հայ և ադրբեջանցի ժողովուրդների խոր վերքերի ապաքինում:

Այսօր Երկնային Հոր շնորհիվ կապաղի, եղբայրասպանության շրջանը, հուսով եմ, անցյալ է դարձել: Համարձակվում եմ ենթադրել, որ այս հարցում քիչ չեն Ադրբեջանի, Հայաստանի և մեր երկրի հոգևոր սպասավորների ջանքերը: Խաղաղության նկատմամբ ցուցաբերված անհողողող կամքը, ուժի դադարապարտումը, միմյանց նկատմամբ ձեռք չբարձրացնելու հավաքացյալների կոչը դրական, անգնահատելի ազդեցություն ունեցան հակամարտության փարածաշրջանում փրկող իրավիճակի վրա: Մեծ բարիք է, որ հակամարտությունը չվերածվեց միջկրոնական պարերազմի, չբարածվեց մերձակա երկրներում և փարածաշրջաններում, չխրախուսվեց բարձրագույն հոգևոր գործիչների կողմից: Իրադրության նման զարգացումը ես վերագրում եմ հանուն հաշտության ազնիվ ու արդար աշխատողների և մեր նկատմամբ Աստծո ողորմածության:

Այսօրվա իրադրությունն Անդրկովկասում երբեք էլ չի կարելի գոհացուցիչ համարել: Ցայժմ չեն կարգավորված հայ-ադրբեջանական հակամարտության լուրջ փարածայնությունները: Ժողովուրդներն իրարից բաժանված են օդարացման, վշտի ու վիրավորանքի պապնեշով: Մի քանի հրապարակախոսներ և հասարակական գործիչներ շարունակում են սերմանել միջցեղային ատելությունը, վրանգվում է մարդկանց հոգևոր և ազգային զգացմունքը: Արտաքին որոշակի ուժեր երկու ժողովուրդների հակամարտությունը ձգտում են օգտագործել իրենց քաղաքական, փոխադասական և ռազմական շահերի համար: Վրանգ կա, որ փարածաշրջան թափանցեն էքստրեմիստական խմբեր, որոնք կարող են նոր այրուհիներ ծնել հրահրել:

Այդ մասին հիշելով, իմ կարծիքով, պետք է նորոգել խաղաղության, երկխոսության և փոխադարձ համագործակցության կոչը: Համոզված եմ, որ պետք է պաշտպանել և հավանություն տալ այն երկխոսությանը, որ տեղի է ունենում Ադրբեջանի և Հայաստանի նախագահների միջև, և նաև հակամարտության կարգավորման միջազգային ջանքերին: Այսպիսով սրելով մեր թեև առանձնացված, բայց հավասարակշռված համակարգ, որի մեջ շարունակում է առաջնակարգ դեր խաղալ Ռուսաստանը: Պետք է խթանել ուղղափառ և մահմեդական հոգևորականների, քաղաքագետների, թղթակիցների, ազդեցիկ այլ մարդկանց ջանքերը, որպեսզի կրթականապես կանխեն թշնամանքը, աջակցեն հաշտությանն ու համաձայնությանը:

Հին և իմաստուն հոգևոր ավանդություններ ունեցող հայ և ադրբեջանցի ժողովուրդները, բառիս դրական իմաստով, դադարապարտված են համարել գոյապահելու

և համագործակցության: Մենք կարող ենք և պարտավոր ենք նպաստել այդ երկու ժողովուրդների միջև երկխոսությանն ու համագործակցությանը: Հուսով եմ, որ մեր ջանքերը կշարունակվեն և հաջողությամբ կսպասկվեն: Չէ՞ որ այդ են սպասում հավատարմությունը, որոնք հոգնել են փառապելուց, սպասում են ժողովուրդները և նրանց ղեկավարները, սպասում են աղբյուրների, հայ, ռուս և այլ ազգերի նոր սերունդները: Խաղաղության մեջ ապրող երեխաները պարբերազմ չեն ուզում. ուրեմն արդարացին են նրանց սպասելիքները, և դա մենք կարող ենք: